Կերակրողին կորցրած անձանց նպաստներ

Բովանդակություն

Կերակրողին կորցրած անձանց ապահովագրության կարևորությունը	1
Եթե դուք աշխատում եք, ի՞նչ է պետք իմանալ կերակրողին կորցրած անձանց նպաստների մասին	1
Երբ մահանում է որևէ ազգական, ի՞նչ է անհրաժեշտ իմանալ կերակրողին կորցրած անձանց նպաստների վերաբերյալ	4
Կապ Հաստատել Սոցիալական Ապահովության Ծառայության հետ	6

Կերակրողին կորցրած անձանց ապահովագրության կարևորությունը

Ընտանիքը կերակրող անձի կորուստը կարող է կործանարար լինել ինչպես հոգեբանական, այնպես էլ ֆինանսական առումով: Սոցիալական ապահովությունն օգնում է մահացած աշխատողի ընտանիքին՝ եկամուտ տրամադրելով:

Այս տեղեկագիրը հնարավորություն է տալիս ձեզ հակիրճ ծանոթանալ մահացած աշխատողի կնոջը/ամուսնուն և երեխաներին կերակրողին կորցնելու կապակցությամբ վճարվող սոցիալական նպաստներին: Այս տեղեկագիրը չի կարող պատասխանել ձեզ հուզող բոլոր հարցերին: Կերակրողին կորցրած անձանց նպաստների վերաբերյալ ավելի մանրամասն տեղեկությունների համար այցելեք մեր կայքէջը կամ զանգահարեք մեր անվճար հեռախոսահամարներով:

Եթե դուք աշխատում եք, ի՞նչ է պետք իմանալ կերակրողին կորցրած անձանց նպաստների մասին

«Կյանքի ապահովագրությունը» սոցիալական ապահովության ծրագրով

Շատերը կարծում են, որ սոցիալական ապահովությունը կենսաթոշակային ծրագիր է: Սակայն սոցիալական ապահովության հարկերի որոշ մասն ուղղվում է կերակրողին կորցնելու նպաստներին՝ աշխատողների և նրանց ընտանիքների համար: Ի դեպ, կերակրողին կորցնելու ձեր նպաստների գումարը, հավանաբար, ավելի մեծ է, քան ձեր կյանքի ապահովագրության արժեքը:

Ձեր մահվան դեպքում ձեր ընտանիքի որոշ անդամներ կարող են կերակրողին կորցնելու նպաստ ստանալ: Այստեղ ներառված են այրի կանայք և տղամարդիկ

(նաև ամուսնալուծված այրի կանայք և տղամարդիկ), երեխաները և խնամքի տակ գտնվող ծնողները:

Ինչպե՞ս ստանալ կերակրողին կորցնելու նպաստը

Երբ դուք աշխատում և վճարում եք սոցիալական ապահովության հարկերը, ապա վաստակում եք սոցիալական ապահովության նպաստներ ստանալու իրավունքի միավորներ: Տարիների քանակը, որ դուք պետք է աշխատեք ձեր ընտանիքի համար, որպեսզի նրանք իրավունք ձեռք բերեն կերակրողին կորցնելու կապակցությամբ սոցիալական նպաստներ ստանալ, կախված է ձեր մահանալու տարիքից: Որքան ցածր է ձեր տարիքը, այնքան քիչ պետք է աշխատած լինեք: Սակայն, սոցիալական ապահովության նպաստ ստանալու համար ոչ ոք չպետք է աշխատի ավելի քան 10 տարի:

Համաձայն հատուկ օրենքի՝ եթե դուք ձեր մահվանից երեք տարի առաջ աշխատել եք միայն մեկ և մեկուկես տարի, ապա մենք պետք է ձեր երեխաներին և ձեր կնոջը/ամուսնուն, որը խնամում է երեխաներին, վճարենք նպաստներ:

Ո՞վ կարող է ստանալ ձեր աշխատանքից բխող կերակրողին կորցնելու ընտանեկան նպաստները

- **Ձեր այրին (կին կամ տղամարդ)** կարող է լրիվ կենսաթոշակային տարիքը լրանալուց հետո ստանալ բոլոր նպաստները: Լրիվ կենսաթոշակի անցնելու տարիքը կերակրողին կորցրած 1945-1956 թթ.-ին ծնված անձանց համար 66 տարեկանն է: Ուստի 1962 թ.-ին կամ հետո ծնված անձանց լրիվ կենսաթոշակի անցնելու տարիքը աստիճանաբար կաճի մինչև 67 տարեկան հասակը: Ձեր այրին (կին կամ տղամարդ) կարող է նվազեցված նպաստներ ստանալ 60 տարեկանից: Եթե այրի կինը կամ տղամարդը հաշմանդամ է, նպաստները կարող են վճարվել 50 տարեկանից: Այրիների և կերակրողին կորցրած այլ անձանց մասին լրացուցիչ տեղեկությունների համար այցելեք ***www.socialsecurity.gov/survivorplan*** կայքէջը:
- **Ձեր այրին (կին կամ տղամարդ)** կարող է նպաստ ստանալ ցանկացած տարիքում, եթե նրա խնամքի տակ է ձեր մինչև 16 տարեկան կամ հաշմանդամ երեխան, ում վճարվում են սոցիալական ապահովության նպաստներ:
- Մինչև 18 տարեկան **ձեր չամուսնացած երեխաները** (կամ մինչև 19 տարեկան երեխաները, եթե նրանք տարրական կամ միջնակարգ դպրոցի աշակերտներ են) նույնպես կարող են նպաստներ ստանալ: Ձեր երեխաները կարող են նպաստ ստանալ ցանկացած տարիքում, եթե հաշմանդամ են դարձել մինչև 22 տարեկանը և մնում են հաշմանդամ: Որոշ դեպքերում մենք կարող ենք նպաստներ վճարել նաև ձեր **խորթ երեխաներին, թոռներին, խորթ թոռներին կամ որդեգրված երեխաներին**:

ՆՇՈՒՄ. *Հաշմանդամ երեխաները, որոնց ծնողները սահմանափակ եկամուտ ու հնարավորություններ ունեն, կարող են լրացուցիչ ապահովության եկամուտների վճարումներ ստանալ: Լրացուցիչ տեղեկությունների համար ծանոթացեք Հաշմանդամ երեխաների նպաստների մասին (Benefits For Children With Disabilities) հրապարակմանը (Հրատարակություն No. 05-10026-AM):*

- **Ձեր խնամքի տակ գտնվող ծնողները** կարող են ստանալ նպաստներ 62 տարեկանից: (խնամքի տակ գտնվող ծնողներ ճանաչվելու համար դուք պետք է հոգացած լինեք նրանց աջակցության ծախսերի առնվազն կեսը):

Ամուսնալուծված այրի կնոջ կամ տղամարդու ընտանեկան նպաստները

Եթե դուք ամուսնալուծվել եք, ձեր նախկին կինը կամ ամուսինը կարող է նպաստներ ստանալ 60 տարեկանից (50-59 տարեկանից՝ եթե հաշմանդամ է), եթե ամուսնությունը տևել է առնվազն 10 տարի: Սակայն ձեր նախկին կինը/ամուսինը, չպետք է պարտադիր համապատասխանի տարիքի և ամուսնության տևողության կանոնի պահանջներին, եթե նրա խնամքի տակ է ձեր երեխան, որի տարիքը չի գերազանցում 16 տարեկանը կամ նա հաշմանդամ է և իրավասու՝ ըստ ձեր տվյալների: Երեխան պետք է լինի ձեր և ձեր նախկին կնոջ/ամուսնու կենսաբանական կամ օրինական ձևով որդեգրված երեխան:

Ամուսնալուծված այրու ընտանեկան նպաստների վճարումը չի ազդի այլ նպաստառուների ուրիշ նպաստների չափի վրա, որոնք վճարում են ստանում աշխատանքային ստաժի հիման վրա: Եթե դուք ամուսնալուծված մայրը կամ հայրն եք, և ձեր խնամքի տակ է աշխատողի երեխան, որի տարիքը չի գերազանցում 16 տարեկանը, կամ նա հաշմանդամ է, ապա ձեր նպաստը կարող է ազդել աշխատանքի ստաժի հիման վրա՝ այլ նպաստառուների նպաստների չափի վրա:

Մահվան միանվագ վճար

Ձեր մահվան կապակցությամբ մենք միանվագ 255 ԱՄՆ դոլարի վճարում ենք կատարում, եթե դուք բավական երկար տարիների աշխատանքային ստաժ ունեք: Մենք կարող ենք վճարել այդ նպաստը միայն ձեր ամուսնուն/կնոջը կամ երեխային, եթե նրանք համապատասխանում են որոշակի պահանջների: Կերակրողին կորցրած անձինք այդ վճարումը ստանալու համար պետք է դիմեն մահվան ամսաթվից հետո՝ երկու տարվա ընթացքում:

Որքա՞ն են նպաստները

Թե որքան գումար կարող է ստանալ ձեր ընտանիքը սոցիալական ապահովությունից, կախված է ձեր ողջ կյանքի ընթացքում ստացած եկամուտների միջին արժեքից: Որքան շատ եք վաստակել, այնքան բարձր են նրանց վճարվող նպաստները:

Ստուգեք ձեր *Սոցիալական ապահովության հաշվետվությունը,* որպեսզի տեսնեք կերակրողին կորցնելու դեպքում մեր նպաստների նախնական չափը: Այստեղ ցուցադրվում է նաև ձեր կենսաթոշակային և հաշմանդամության նպաստների նախնական չափը և այլ կարևոր տեղեկություններ: Առցանց ստեղծեք *my* Social Security հաշիվը, որպեսզի կարողանաք ուսումնասիրել *Սոցիալական ապահովության հաշվետվությունը:*

Առցանց *my* Social Security հաշվեհամարը

Այժմ դուք առցանց կարող եք հեշտությամբ ստեղծել *my* Social Security ապահով հաշիվ, որի միջոցով կարող եք դիտել ձեր *Սոցիալական ապահովության հաշվետվությունը* և ստուգել ձեր եկամուտներն ու նպաստների նախնական չափը: Դուք առցանց կարող եք օգտագործել նաև *my* Social Security հաշիվը սոցիալական ապահովության քարտի փոխարինման հայտ ներկայացնելու համար (հասանելի է որոշ նահանգներում և Կոլումբիայի օկրուգում): Եթե դուք ստանում եք նպաստներ, ապա կարող եք նաև

- ստանալ նպաստը հաստատող նամակը,
- փոխել ձեր հասցեն և հեռախոսահամարը,
- Medicare քարտի փոխարինման հայտ ներկայացնել,
- Պահանջել SSA-1099 կամ SSA-1042S ձևերի պատճենները հարկային ժամանակաշրջանի համար, կամ
- Սկսել ստանալ ուղիղ փոխանցումներ կամ փոխել ուղիղ փոխանցումների հաշիվը:

Դուք կարող եք ստեղծել *my* Social Security հաշիվ, եթե լրացել է ձեր 18 տարեկանը, ունեք սոցիալական ապահովության

հաշվեհամար, վավեր փոստային հասցե և էլ. փոստի հասցե: Հաշիվը ստեղծելու համար այցելեք ***www.socialsecurity.gov/myaccount*** կայքէջը: Ձեզ անհրաժեշտ կլինի որոշ անձնական տեղեկություններ ստանալ՝ ձեր ինքնությունը հաստատելու համար: Ձեզ կառաջարկվի ընտրել օգտատիրոջ անուն և գաղտնաբառ:Ապա կնշեք ձեր էլեկտրոնային փոստի հասցեն: Դուք պետք է ընտրեք, թե ինչպես կցանկանայիք ստանալ միանգամյա օգտագործման անվտանգության կոդը ձեր բջջային հեռախոսին կամ էլեկտրոնային փոստի հասցեին, որը պետք է մուտքագրեք հաշիվը ստեղծելու ժամանակ: Ամեն անգամ, երբ դուք մուտք կգործեք ձեր օգտատիրոջ անվամբ և գաղտնաբառով, մենք ձեզ միանգամյա օգտագործման անվտանգության կոդ կուղարկենք ձեր բջջային հեռախոսին կամ էլեկտրոնային փոստի հասցեին: Անվտանգության կոդը ձեր անձնական տեղեկությունների պահպանման մեր ուժեղացված անվտանգության հատուկ պաշտպանության ֆունկցիան է: Հիշեք, որ բջջային օպերատորները կարող են սակագներ կիրառել բջջային հեռախոսի և տվյալների փոխանցման ծառայությունների համար:

Երբ մահանում է որևէ ազգական, ի՞նչ է անհրաժեշտ իմանալ կերակրողին կորցրած անձանց նպաստների վերաբերյալ

Ինչպե՞ս դիմել նպաստներ ստանալու համար

Եթե դուք ներկայումս չեք ստանում սոցիալական ապահովության նպաստներ

Սեղմ ժամկետներում դիմեք կերակրողին կորցնելու նպաստներ ստանալու համար, քանի որ, որոշ դիմորդների մենք նպաստ ենք վճարում դիմումի ներկայացման պահից, և ոչ թե աշխատողի մահվան ժամանակից:

Դուք կարող եք դիմել հեռախոսով կամ սոցիալական ապահովության ցանկացած գրասենյակ: Մեզ անհրաժեշտ կլինեն որոշ տեղեկություններ, սակայն մի հետաձգեք դիմումը ներկայացնելը, եթե չունեք բոլոր փաստաթղթերը: Մենք կօգնենք ձեռք բերել այն, ինչ ձեզ հարկավոր է: Մեզ անհրաժեշտ են փաստաթղթերի բնօրինակները կամ դրանց պատճենները՝ վավերացված դրանք դուրս գրող հաստատությունների կողմից:

Անհրաժեշտ տեղեկությունները ներառում են.

- Մահվան փաստաթուղթ, տրված թաղման բյուրոյի կողմից, կամ մահվան վկայականը,
- Ձեր սոցիալական ապահովության հաշվեհամարը և մահացած աշխատողի SSN համարը,
- Ձեր ծննդյան վկայականը,
- Ձեր ամուսնության վկայականը, եթե դուք այրին եք (կին կամ տղամարդ);
- Ամուսնալուծության մասին ձեր փաստաթղթերը, եթե դիմում եք որպես ամուսնալուծված այրի կին/ամուսին;
- Խնամքի տակ գտնվող երեխաների սոցիալական ապահովության հաշվեհամարները, եթե առկա են և նրանց ծննդյան վկայականները;
- Մահացած աշխատողի W-2 ձևաթուղթը կամ վերջին մեկ տարվա ինքնազբաղվածության դաշնային հարկային հայտարարագիրը, և
- Ձեր բանկի անվանումը և ձեր հաշվեհամարը, որպեսզի նպաստներն ամնիջապես փոխանցվեն այդ հաշվեհամարին:

Եթե ներկայումս դուք ստանում եք սոցիալական ապահովության նպաստներ

Եթե դուք, որպես կին կամ ամուսին, ընտանեկան նպաստներ եք ստանում ձեր կնոջ/ամուսնու աշխատանքային ստաժի հիման վրա, ապա մենք կփոխենք նպաստի չափը կերակրողին կորցնելու դեպքում,

եթե դուք տեղեկացնեք մեզ նրա մահվան մասին: Եթե մեզ անհրաժեշտ լինի լրացուցիչ տեղեկատվություն, մենք կկապվենք ձեզ հետ:

Եթե դուք նպաստներ եք ստանում ձեր աշխատանքային ստաժի հիման վրա, զանգահարեք կամ այցելեք մեզ: Մենք կստուգենք, թե դուք, որպես այրի, իրավասու եք արդյոք հավելյալ գումարներ ստանալ: Եթե դա հաստատվի, դուք կստանաք նպաստների համադրություն, որն ավելի մեծ գումար է կազմում: Դուք պետք է դիմում ներկայացնեք կերակրողին կորցնելու նպաստի անցնելու համար: Մենք անհրաժեշտ կլինի նաև ձեր կնոջ/ամուսնու մահվան վկայականը:

Որքա՞ն գումար ես կստանամ

Նպաստը հաշվարկելիս մենք հիմնվում ենք հանգուցյալի եկամուտների մասին տվյալների վրա: Որքան ավելի շատ է աշխատողը վճարել սոցիալական ապահովագրությանը, այնքան ավելի մեծ կլինեն նպաստի գումարները:

Սոցիալական ապահովությունը հաշվարկում է կերակրողին կորցնելու նպաստի վճարվելիք տոկոսը՝ հիմնվելով մահացած աշխատողի բազային նպաստի չափի վրա: Տոկոսը կախված է կերակրողին կորցրածի տարիքից և աշխատողի հետ բարեկամական կապից: Եթե մահացած աշխատողը ստանում էր նվազեցված նպաստներ, ապա ձեր կերակրողին կորցնելու նպաստի հաշվարկը հիմնված կլինի նշված գումարի վրա: Նպաստ ստանալու առավել բնորոշ դիմումի ձևերը.

- Այրին, որի լրիվ կենսաթոշակի անցնելու տարիքը լրացել է կամ ավելի բարձր տարիքի է, որպես կանոն, ստանալու է նպաստ՝ աշխատողի բազային նպաստի 100 տոկոսի չափով,
- Այրին, որի 60 տարեկանը լրացել է, բայց դեռ լրիվ կենսաթոշակի անցնելու տարիքում չէ, ստանալու է նպաստ՝ աշխատողի բազային նպաստի մոտ 71-ից 99 տոկոսի չափով,
- Ցանկացած տարիքի այրի, որի խնամքի տակ մինչև 16 տարեկան երեխա կա, ստանալու է նպաստ՝ աշխատողի բազային նպաստի 75-ի տոկոսի չափով,
- Երեխան ստանալու է նպաստ՝ աշխատողի բազային նպաստի 75-ի տոկոսի չափով,

Ընտանեկան առավելագույն նպաստները

Ձեզ վճարվող նպաստների ընդհանուր գումարն ունի շեմ, որից ավել մենք չենք կարող ամենամսյա վճարումներ կատարել ընտանիքի մյուս անդամներին, Շեմը տատանվում է մահացած աշխատողի նպաստի 150-ից 180 տոկոսի սահմաններում:

Կենսաթոշակ աշխատանքային գործունեությունից, որը չի վճարվում սոցիալական ապահովության կողմից

Եթե դուք ստանում եք կենսաթոշակ այն աշխատանքի վայրից, որը վճարել է սոցիալական ապահովության ձեր հարկերը, ապա այդ կենսաթոշակը չի ազդելու ձեր սոցիալական ապահովության նպաստների վճարման վրա: Սակայն, եթե դուք ստանում եք կենսաթոշակ կամ հաշմանդամության թոշակ այլ աշխատանքի վայրից՝ սոցիալական ապահովության ծրագրից դուրս, օրինակ՝ դաշնային քաղաքացիական ծառայության, որոշ պետական կամ տեղական կառավարական հաստատությունների կամ օտար երկրում աշխատանք կատարելու համար, ապա մենք կարող ենք նվազեցնել ձեր սոցիալական ապահովության նպաստները:

Լրացուցիչ տեղեկությունների համար ծանոթացեք *Պետական կենսաթոշակային հատկացումներ (Government Pension Offset) հրապարակմանը* (Հրատարակություն No. 05-10007) այն պետական ծառայողների վերաբերյալ, որոնք կարող են իրավունք ունենալ ամուսնու/կնոջ եկամուտների հիման վրա սոցիալական ապահովության նպաստներ ստանալ: Ծանոթացեք

Գերեկամուտների բացառման դրույթներ (Windfall Elimination Provision) հրապարակմանը (Հրատարակություն No. 05-10045) այն մարդկանց համար, որոնք աշխատել են այլ երկրներում կամ պետական ծառայողներ են և նույնպես իրավունք ունեն ստանալ իրենց սեփական այլ սոցիալական ապահովության նպաստներ:

Եթե ես շարունակում եմ աշխատել

Եթե դուք շարունակում եք աշխատել, երբ արդեն ստանում եք կերակրողին կորցրածի սոցիալական ապահովության նպաստներ, և ձեր լրիվ կենսաթոշակի անցնելու տարիքը չի լրացել, ապա մենք կարող ենք կրճատել ձեր նպաստները, եթե ձեր եկամուտները գերազանցեն որոշակի սահմանաչափը: 1945 թ.-ից 1956թ.-ին ծնված կերակրողին կորցրած անձանց լրիվ կենսաթոշակի անցնելու տարիքը 66 տարեկանն է: Լրիվ կենսաթոշակի անցնելու տարիքը 1962 թ.-ին և հետո ծնված անձանց համար աստիճանաբար աճելու է մինչև 67 տարեկանը: Որպեսզի պարզեք, թե որքան են եկամուտների սահմանափակումներն ընթացիկ տարում և որքան նվազեցումներ կլինեն ձեր սոցիալական նպաստներից, ծանոթացեք *Ինչպես է աշխատանքային գործունեությունը ազդում ձեր նպաստների վրա (How Work Affects Your Benefits) հրապարակմանը* (Հրատարակություն No.05-10069-AM):

Լրիվ կենսաթոշակի անցնելու ձեր տարիքը լրանալու ամսվանից եկամուտների սահմանաչափ չի սահմանվում:

Բացի այդ, ձեր եկամուտները կնվազեցնեն **միայն** ձեր նպաստների չափը, բայց ոչ ընտանիքի այլ անդամների նպաստները:

Եթե ես կրկին ամուսնանամ

Սովորաբար, կրկին ամուսնանալու դեպքում հնարավոր է այրու նպաստ ստանալ, եթե ձեր տարիքը չի գերազանցում 60 տարեկանը: Սակայն, եթե ձեր տարիքը գերազանցում է 60 տարեկանը (կամ 50 տարեկանը՝ եթե հաշմանդամ եք), ապա ձեր **նախկին** ամուսնու/կնոջ եկամուտների հիման վրա ստացվող նպաստների վճարումը չի դադարեցվի: Եթե ձեր տարիքը գերազանցում է 62 տարեկանը, ապա դուք կարող եք ձեր նոր կնոջ/ամուսնու աշխատանքային եկամուտներից ստանալ նոր նպաստներ, եթե դրանց գումարը գերազանցի ձեր նախկին նպաստների չափը:

Բողոքարկման իրավունք

Եթե դուք համաձայն չեք ձեր հայցադիմումի հիման վրա ընդունված որոշմանը, ապա կարող եք բողոքարկել այն: Ձեր հնարավոր քայլերի մասին ավելի մանրամասն տեղեկանալու համար ծանոթացեք *Բողոքարկման գործընթաց (The Appeals Process) հրապարակմանը* (Հրատարակություն No. 05-10041-AM):

Դուք կարող եք ինքներդ բողոք ներկայացնել, ստանալով անվճար օգնություն սոցիալական ապահովությունից, կամ կարող եք ընտրել ներկայացուցիչ՝ ձեր շահերը ներկայացնելու համար: Մենք տեղեկություններ կտրամադրենք այն կազմակերպությունների մասին, որոնք կարող են օգնել ձեզ գտնել ներկայացուցիչ: Ներկայացուցչի ընտրության վերաբերալ լրացուցիչ տեղեկությունների համար ծանոթացեք *Ներկայացուցչության ձեր Իրավունքը (Your Right to Representation) հրապարակմանը* (Հրատարակություն No. 05-10075-AM):

Կապ Հաստատել Սոցիալական Ապահովության Ծառայության հետ

Կան Սոցիալական Ապահովության Ծառայության հետ կապ հաստատելու տարբեր միջոցներ, այդ թվում առցանց, հեռախոսով և անձնապես: Մենք այստեղ ենք՝ Ձեր հարցերին պատասխանելու և Ձեզ սպասարկելու նպատակով: Ավելի քան 80 տարվա ընթացքում, Սոցիալական Ապահովությունը օգնում է ապահովելու այսօրվա և վաղվա օրը՝ միլիոնավոր

մարդկանց տրամադրելով նպաստներ և ֆինանսական աջակցություն՝ իրենց կյանքի ճանապարհին:

Այցելե՛ք մեր կայքէջը՝

Ցանկացած վայրից և ցանկացած ժամանակ Սոցիալական Ապահովության գործնեություն վարելու ամենահարմար եղանակը դա մեր՝ ***www.socialsecurity.gov*** կայքէջը այցելելն է: Այնտեղ Դուք կարող եք՝

- Ստեղծել *my* Social Security account (իմ Սոցիալական Ապահովություն անձնական էջը)՝ Ձեր *Social Security Statement* (*Սոցիալական Ապահովության հաշվետվությունը*) դիտելու, Ձեր հասույթը հավաստելու, նպաստների հավաստագրության նամակը տպելու, Ձեր ուղղակի փոխանցման (direct deposit) վերաբերյալ տեղեկատվությունը փոխելու, Ձեր Medicare-ի քարտի փոխարինում հայցելու, SSA-1099/1042S փոխարինում ստանալու նպատակով և ավելին;
- Դիմել Extra Help (Օժանդակ օգնության) ծրագրին Medicare-ի դեղատոմսով տրամադրվող դեղորայքի ծրագրով նախատեսված ծախսերի համար/
- Դիմել կենսաթոշակի, հաշմանդամության և Medicare-ի նպաստների համար
- Գտնել մեր հրատարակությունների կրկնօրինակները
- Ստանալ պատասխաններ հաճախ տրվող հարցերին և
- Շատ ավելին

Նշված ծառայություններից որոշները հասանելի են միայն անգլերեն լեզվով: Այցելե՛ք մեր Multilanguage Gateway բաժինը (Բազմալեզու էջը) ՝ Հայերեն լեզվով տեղեկատվություն ստանալու համար: Մենք տրամադրում ենք անվճար թարգմանչական ծառայություններ, որպեսզի օգնենք Ձեզ վարելու Ձեր Սոցիալական Ապահովության գործնեությունը: Տվյալ թարգմանչական ծառայությունները հասանելի են անկախ նրանից, թե Դուք դիմել եք մեզ հեռախոսով, թե այցելել եք Սոցիալական Ապահովության գրասենյակ:

Հեռախոս

Եթե Դուք չունեք համացանցի (Ինտերնետի) հասանելիություն, ապա հեռախոսի միջոցով մենք շատ ավտոմատացված ծառայություններ ենք առաջարկում՝ օրը 24 ժամ շաբաթը 7 օր: Զանգահարեք մեզ մեր անվճար՝ **1-800-772-1213** հեռախոսահամարով կամ մեր TTY (հեռատիպ)՝ **1-800-325-0778** հեռախոսահամարով՝ լսողության հետ խնդիրներ ունենալու դեպքում:

Եթե Դուք աշխատակցի հետ խոսելու կարիք ունեք, ապա մենք կարող ենք պատասխանել Ձեր զանգերին՝ Երկուշաբթիից Ուրբաթ ժամը առավոտյան 07:00-ից մինչև երեկոյան 19:00-ը: Մենք խնդրում ենք Ձեր համբերատարությունը ծանրաբեռնված շրջաններում, քանի որ Դուք կարող եք ունենալ սովորականից ավելի հաճախ ստացվող ծանրաբեռնվածության ազդանշան և ավելի երկար սպասելաժամանակ մեզ հետ խոսելու համար: Մենք ակնկալում ենք սպասարկել Ձեզ:

Securing today and tomorrow

Social Security Administration
Publication No. 05-10084-AM | March 2018
Կերակրողին կորցրած անձանց նպաստներ
Survivors Benefits (Armenian)
Produced and published at U.S. taxpayer expense
Կազմված և հրատարակված է ԱՄՆ հարկ վճարողների հաշվին: